https://doi.org/10.52027/18294685-mha2024.1

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԳԾԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ (1910-1915 ԹԹ.)

Բանալի բառեր՝ Զմյուռնիա, ազգային դիմագիծ, հայկական մամուլ, «Աշխատանք» թերթ, հայկական կրթօջախներ։

Keywords: Smyrna, national identity, Armenian periodical, “Ashkhatank” newspaper, Armenian educational centers.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաշատ բնակավայրերում տարվող պետական հատուկ մշակված հայահալած քաղաքականության պայմաններում հայության համար առաջնահերթ խնդիր էր ազգային դիմագծի պահպանումը։ Այդ նպատակին էին ծառայում ազգային-հոգևոր, կրթական և մշակութային բոլոր կառույցներն ու հաստատությունները։ Այս գործընթացն ուներ իր յուրահատկությունները մասնավորապես զմյուռնիահայության կյանքում, ինչը պայմանավորված էր տվյալ գաղթօջախի ձևավորման և կենսապահովման առանձնահատկություններով [Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, 2006, 155-156]։ Դրանում ի սկզբանե սեփական կնիքն էր դրել տեղի հայկական մամուլը [Խառատյան, 2022, 425-429], որը փորձել էր հասարակական կարծիքի ձևավորման միջոցով հասնել հիշյալ հիմնահարցի լուծմանը։ Դրան անմասն չէր մնացել նաև Զմյուռնիա քաղաքում 1910-1915 թվականներին հրատարակված «Աշխատանք» պարբերականը։ Այն լույս է տեսել չորեքշաբթի և շաբաթ օրերին «Քեշիշյան» տպարանում։ Հիմնական աշխատակիցները ժամանակի հայտնի հասարակական-քաղաքական գործիչներն ու մտավորականության ներկայացուցիչներն էին՝ Է. Ակնունին, Ավետիս Ահարոնյանը, Մկրտիչ Պարսամյանը, Մարզպետը, Համբարձում Համբարձումյանը, Վահե Տիճյանը և այլք [Աշխատանք, 1910, №11]։ Պարբերականի տերը և տնօրենը Սեդրակ Թոքաճյանն էր։

«Աշխատանք» թերթի մտահոգությունների առաջին տեղում հայկական Դիմագծի պահպանման եվ ազգային կրթօջախների խնդիրներն էին

1908-1914 թվականներին Զմյուռնիայում և Կ.Պոլսում հրատարակվել է ավելի քան 120 պարբերական, իսկ Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում՝ շուրջ 30 թերթ և ամսագիր [Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, 2017, 213-214]։ Հենվելով զմյուռնիահայ մամուլի ավանդույթների վրա, որոնք ձևավորվել էին դեռևս 19-րդ դարի 40-ական թվականներից, «Աշխատանքը» դարձել էր դրանց շարունակողը և արծարծել էր մեր ժողովրդին հուզող տարաբնույթ խնդիրներ, անդրադարձել էր իշխանությունների հայահալած գործելակերպին, արևմտահայության հանդեպ թույլ տրվող անիրավություններին և թալանին, սոցիալական պայմաններով պայմանավորված արտագաղթին հայրենի բնակավայրերից, Հայկական հարցի զարգացումներին, ընթերցողների մշակութային հետաքրքրություններին և բազմաթիվ այլ հարցերի։ Խմբագրակազմի համար այդ ամենը կարծես դարձել էր հայեցի կրթության, ազգային ավանդույթներին հավատարիմ մնալու, հայության դիմագիծը պահպանելու,

ներքին կյանքն առավելապես ինքնուրույն վարելու և հայ մնալու առաջնային նպատակին հասնելու միջոց:

Շեշտենք, որ այս թերթի դիմագիծը և որդեգրած քաղաքականությունը պայմանավորված էին հրատարակության ժամանակահատվածով, որն ընդգրկում էր 1908 թվականի երիտթուրքական հեղաշրջմանը և իշխանազավթմանը հաջորդող տարիներից մինչև Հայոց ցեղասպանության սկզբնական փուլն ընկած շրջանը: Այդ տարիներին առերևույթ թույլ էր տրված նաև մամուլում արտահայտել տեսակետներ ու կարծիքներ, ներկայացնել հանրային տրամադրությունները պետական կառույցների գործունեության և ծրագրերի վերաբերյալ: Չպետք է մոռանալ, որ միևնույն ժամանակ մամուլի նյութերը, գրական ստեղծագործություններն անցնում էին գրաքննության ծանր մամլիչի տակով:

«Աշխատանքի» համար ռազմավարական նշանակություն ունեին ազգային դիմագծի պահպանման, աճող սերնդի հայեցի դաստիարակության և կրթության խնդիրները: Ընդ որում, խմբագրակազմը դրանք փոխկապակցված էր համարում ու հայկական դիմագծին հավատարիմ մնալու հարցերին անդրադառնում էր կրթադաստիարակչական թեմայի շրջանակում: Չկար որևէ համար, որտեղ խմբագրությունն առնվազն երկու հոդված չնվիրեր հիշյալ հարցերին: Անգամ 1915 թվականին Հայոց ցեղասպանության շրջանում թերթում դրանք կրկին առաջնային էին:

Ի տարբերություն ժամանակի արևմտահայ այլ պարբերականների՝ «Աշխատանքը» քննարկում էր ոչ թե ուսուցիչների ցածր աշխատավարձին կամ նյութական անձուկ կացությանն առնչվող խնդիրները, այլ ազգային կյանքում նրանց դերի ու պատասխանատվության հարցերը [Աշխատանք, 1913, №2]: «Գավառի ուսուցչության շուրջ» թղթակցության հեղինակ Վահե Տիճյանի կարծիքով՝ մի շարք բնակավայրերում ուսուցչի կոչմանն անհամապատասխանությունն էր արևմտահայ գավառի ուսուցիչների արգահատելի դիրքի պատճառը [Նույն տեղում]: «Դպրոցէն կերպով մը իյնալու վախէն ահաբեկ, չգէտ Թաղական կամ Ուսումնական խորհուրդներու և Հոգաբարձուներու բերանէն կախուող, քծնող ուսուցիչներու չափազանց շատ գոյութիւնը գաւառու մէջ ամենամեծ պատճառն է այս բարոյական ողբալի սնանկութեան»,- գրում էր Վ.Տիճյանը [Նույն տեղում]: Ուսուցիչ-ուսուցչուհիները, եթե համարձակվում էին ընդվզել տիրող անառողջ մթնոլորտի, դպրոցներում կիրառվող կամայականությունների և անօրինությունների դեմ, ապա ենթարկվում էին անարգանքի ու հալածանքի: Ուսուցիչ բառը շատ վայրերում հոմանիշ էր համարվում հալածանքի և զրկանքի առարկա բառերին [Նույն տեղում]: «Աշխատանքը» բերում էր փաստեր, երբ ուսուցիչները պատժվում էին իրենց համարձակ պահվածքի համար [Նույն տեղում]: Թերթը Զմյուռնիայի մեկից ավելի վարժարանների ու դպրոցների «ընկած» վիճակի համար պատասխանատու էր համարում հիմնականում Իզմիրի հոգևոր առաջնորդ Մատթեոս Ինճյանին: Մատթեոս ծայրագույն վարդապետ Ինճյանը ծնվել էր 1878 թվականին Կ. Պոլսում: Նախնական կրթությունն ստացել էր պատրիարքարանի, ապա Ղալաթիայի ազգային կենտրոնական վարժարաններում: 1904 թվականին նա դոկտորի աստիճանով ավարտել էր Փարիզի իրավաբանական համալսարանը: 1909 թվականին ձեռնադրվել էր կուսակրոն աբեղա՝ հետագայում դառնալով ծայրագույն վարդապետ [Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, 2001, 951]: Նա, ըստ այդ հրապարակումների, ամեն ինչ անում էր, որ կրթօջախներից անձնական շահույթ ունենար [Աշխատանք, 1913, №3]:

Պարբերականի համար անընդունելի էր Հռիփսիմյան օրիորդաց վարժարանում սովորական դարձած այն երևույթը, որ ավարտական քննությունների ժամանակ աշակերտուհիներն իրարից արտագրում էին հանձնարարությունների պատասխանները: «Հռիփսիմեանը իր ամբողջ ուսուցչական կազմին մէջ մէկ հատիկ վարժուհի իսկ չունի՝ Իզմիրի համար զարգացած հայուհիներ պատրաստելու կարող»,- գրում էր «Աշխատանքը»՝ ավելացնելով, թե կանանց դաստիարակությունը և կրթությունն այն ներուժ կռվաններն էին, որոնց վրա բարձրանում էր ազգի գոյության վերնաշենքը [Աշխատանք, 1913, №5]:

Հայեցի դիմագծի պահպանման գործում ազգային կրթօջախների դերի արժևորման տեսանկյունից կարևոր էր Մելքոն Հովսեփյանի «Մի ձեռքը ծափ չի տար. մանկավարժական հարցեր» երկմասանի հոդվածը [Աշխատանք, 1913, №25-26]: Հեղինակն այդտեղ իրավիճակը շտկելու ուղիներ էր մատնանշում՝ գրելով, թե դպրոցն, առանձին վերցրած, ոչինչ չէր կարող անել. «Մեկ ձեռքը ծափ չի տար, և անհրաժեշտ է ընտանիքի աջակցութիւնը» [Աշխատանք, 1913, №26]: Ըստ այդմ՝ դպրոցը և ընտանիքը պետք է ձեռք ձեռքի տային և միասին զբաղվեին երեխաների կրթության ու դաստիարակության գործով: «Աշխատանքը» նշում էր, որ կրթությունը ազգային դիմագիծը պահող կենսական անհրաժեշտություն էր հայության համար [Աշխատանք, 1914, №55]: Ներկայացնում էր գավառում հաջողության հասած ազգային վարժարանների օրինակներ, ի թիվս որոնց՝ Վանի Սանդուխտյան օրիորդաց դպրոցի 40-ամյա փորձառությունը [Աշխատանք, 1914, №52]: «Աշխատանքը» մինչև վերջին համարը անդրադարձել էր այս թեմային: Ասվածի վկայությունը 1915 թվականի գրեթե բոլոր համարներում առկա վերլուծական հոդվածներն էին:

Ներկայացված հիմնախնդիրներին զուգահեռ՝ «Աշխատանքը» փորձում էր հրապարակումների միջոցով բացատրել, որ ազգային լիարժեք կրթություն ստանալու և հայկականությունը պահելու համար անհրաժեշտ էր բարեփոխել երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները: «Հայ ժողովուրդը ենթարկուած է քաղաքական անլուր ճնշումներու, հայահալած ու ջնջող վարչութեան մը, իրաւազրկութեան ամենէն գռեհիկ տեսակին, ասոնք մէկ կողմէն, իսկ միւս կողմէն քրդական զինուած հրոսակներու դէմ ան կանգնած է բոլորովին անպաշտպան և անզէն», - գրում էր պարբերականը [Նույն տեղում]: Դիմում էր նաև ընթերցողներին, որ նրանք գործադրեին բոլոր միջոցները՝ հայրենիքը չլքելու և ազգային դիմագիծը պահպանելու համար:

«Աշխատանքը» կարեվորել էր ազգային համախմբման եվ Միասնական պայքարի դերը հայեցի դիմագծի պահպանման գործում

Թերթն անդրադարձել էր արտագաղթի և բնօրրանի դատարկման կործանարար հետևանքների դեմ պայքարելու նպատակով 1913 թվականի ամռան վերջին Զմյուռնիայի հայ քաղաքական երեք կուսակցությունների («Դաշնակցութեան Իզմիրի Կոմիտեի, Հնչակեան Իզմիրի մասնաճիւղի, Սահմանադիր-Ռամկավար ակումբի») մի շարք խորհրդակցական ժողովներից հետո ստեղծված միջկուսակցական համերաշխության մարմնի՝ «Հայկական դատի շուրջ միասնաբար պայքարելու համար» իրականացվող աշխատանքներին [Աշխատանք, 1913, №19]: Նրանք դա հիմնավորում էին «քաղաքական ներկայ բացառիկ կացութեամբ և մանաւանդ խրատուած այն դառն փորձերէն, որոնք անցեալին մէջ այնքան ոյժեր վատնել տուին» [Նույն տեղում]:

«Աշխատանքը» տպագրել էր Իզմիրահայության համերաշխության մարմնի ծրագիրը [Աշխատանք, 1913, №28], որտեղ մանրամասն շարադրված էին նաև այդ կառույցի նպատակները: Հիշյալ մարմինը ձգտելու էր հաշտարար եղանակով լուծել տարածաշրջանում ծագող ազգային վեճերը, նպաստել համերաշխության մթնոլորտի պահպանմանը և այդ կերպ օգտակար լինել ազգի կենսական շահերին [նույն տեղում]: Թերթը նաև լուսաբանել էր Զմյուռնիայի Միջկուսակցական համերաշխության մարմնի աշխատանքները: Հրապարակումներից պարզ էր դառնում, որ անպտուղ էին մնում ազգային ուժերը համախմբելու ջանքերը, և այդ կառույցը դատապարտված էր անգործության [Աշխատանք, 1913, №23]:

«Աշխատանքը» անբարենպաստ և կործանարար էր համարում այդ իրավիճակը, քանզի գիտակցում էր, որ թեև Հայկական հարցի լուծման համար նպաստավոր (միևնույն ժամանակ վտանգավոր) պայմաններ էին ստեղծվել, բայց կառավարող «Իթթիհատ վե թերաքզ» կուսակցությունը չէր հանդուրժում այլախոհությունը և ազգերի ինքնավարությունը, առաջնորդվում էր «միատիրական անյագ ախորժակով» [Աշխատանք, 1913, №25]: Հոդվածներից մեկում

հայությանը կոչ էր արվում լինել աչալուրջ [Աշխատանք, 1913, №29], որովհետև բարդ էր Հայկական հարցի լուծման գործընթացը. տարբեր պետություններ այստեղ հետապնդում էին իրենց շահերը: Հոդվածագրի կարծիքով՝ հայ ժողովրդին մնում էր ապավինել իր իսկ ուժերին և ինքնօգնության դիմել [Նույն տեղում]: Է. Ակնունին, օրինակ, հայ հանրության ուշադրությունը հրավիրում էր մտահոգիչ այն հանգամանքների վրա, որոնք բարդացնում էին Հայկական հարցի լուծման գործընթացը և խանգարում էին սեփական հայրենիքում հայ մնալուն: «Այժմ մի կողմից թիւրքական սահմանների նւազեցումը և պետական քաղաքականութեան ձախողանքը, իսկ միւս կողմից եւրոպական շահերի նոր դասաւորումը հայկական դատը դարձրել են օրվան մեծ խնդիրը, այն կեդրոնական կէտը, դէպի որը իր հայեացքն է սեւեռած ոչ միայն հարեւան Ռուսիան, այլեւ հեռաւոր Գերմանիան, մի հարց, որ իր համեստութեամբն հանդերձ՝ եւրոպական շահերը շօշափելու գաղտնիքն ունի»,- կարծում էր Ակնունին [Աշխատանք, 1913, №17]: Նա առաջարկում էր աշխարհաքաղաքական այդ կարևոր ժամանակահատվածում ուժերը չվատնել մանր-մունր կենցաղային խնդիրների վրա, այլ՝ համախմբվել և միասնաբար գործել [Նույն տեղում]:

Թերթում ազգային համախմբման անհրաժեշտությունը հատկապես շեշտվում էր՝ 1913 թվականի կեսերից սկսած: Բերենք բնորոշ օրինակ: «Երեսփոխանական ընտրությունները և հայերը» հարցազրույցում Է. Ակնունին Տիգրան Զավենի հետ քննարկում էր Պատրիարքարանի՝ Բ. Դուռ ներկայացրած թագրիրում երեսփոխանական ընտրությունների վերաբերյալ արևմտահայության պահանջները. «Մենք պահանջած էինք համեմատական ներկայացուցչութիւն և հայ երեսփոխաններու ընտրութիւնը հայ ժողովուրդին կողմէն: Կառավարական կուսակցութիւնը հայերու թիւին համաձայն երեսփոխաններ չկրնալով ապահովել, ատոր պատասխանատուութիւնը ձգած է իսլամ ընտրողներուն վրայ: Այս դեպքում ցնորք մը պիտի ըլլայ ընտրական իրավունքը»,- փաստում էր Ակնունին [Աշխատանք, 1913, №46]: Նա իրավացիորեն պնդում էր, որ Իթթիհատի կողմից նշանակված հայ երեսփոխանները կլինեին ա՛յդ կուսակցության և ոչ թե հայ ժողովրդի ներկայացուցիչները Օսմանյան Թուրքիայի խորհրդարանում: Բնական էր, որ հայերը պահանջում էին իրենց ձայներով կատարել հայ պատգամավորների ընտրությունը: Քանի որ Թուրքիայում 1913 թվականին մեկ երեսփոխանը 50.000 անձի ներկայացուցիչն էր, իսկ «Աշխատանքի» տվյալներով՝ այդ օրերին այդ երկրում 2.000.000 հայ էր ապրում, հայերը պահանջում էին քսան երեսփոխան օսմանյան խորհրդարանի համար [նույն տեղում]: Արևմտահայությունն իր քաղաքական պայքարը կազմակերպել էր քաղաքակիրթ եղանակներով, այն է՝ խորհրդարանում հայ պատգամավորներ ունենալու նպատակով թուրքական կուսակցությունների հետ համագործակցելու և տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող պետությունների հետ բանակցելու միջոցով: Անգամ պայքարի այս ճանապարհն արևմտահայության դեմ ավելի էր գրգռել թուրքական իշխանություններին, որոնք 1913-1914 թվականներին արդեն բացահայտ կերպով սկսել էին սպառնալ հայերին, ընդ որում՝ ոչ միայն խոսքով, այլև կոնկրետ ջարդերով: «Աշխատանքում» այդ կարգի սպառնալիքների բազմաթիվ օրինակներ կային: Օրինակ՝ թերթի Վանի թղթակից Ա.Հրահատը տեղեկացնում էր, որ Հայոց ձորի Անգղ գյուղի մոտակայքում երկու հայի և երկու քրդի միջև ծագած զինված միջադեպից հետո թուրք ոստիկանները ազատ էին արձակել քրդերին և ձերբակալել էին ոչ միայն այդ երկու հային, այլև Անգղ գյուղի ևս տասնյոթ հայ բնակիչների: Երբ անգղցիները բողոքով դիմել էին Հայոց ձորի թուրք մյուտիրին, նա պատասխանել էր սպառնալիքով. «Հայե՛ր, ձեր բոլոր ջանքն է, որ Ռուսիան միջամտէ, բայց գիտցէ՛ք, որ այդ պարագային ձեզմէ ոչ մէկը ողջ չպիտի թողունք» [Աշխատանք, 1913, №15]:

Խուճապի մթնոլորտ էր տիրում Արևմտյան Հայաստանում՝ 1913 թվականի վերջերից սկսած: Թերթը վկայում էր, թե ինչպես էին արևմտահայերը «գլուխն առած՝ խուճապով խոյս տալիս հայրենի աշխարհից» [Աշխատանք, 1913, №20]: Հայրենիքը ճգնաժամի մեջ էր, իսկ նրանք հեռանում էին, լքում էին հայրենի աշխարհը, երբ անհրաժեշտ էր համախմբել ուժերը.

այսպես էր կարծում հոդվածի հեղինակ Տարագիրը։ Նա համոզված էր, որ այս դեպքում հայրենիքն իրավունք ուներ ասելու. «Փախէք դուք, բոլոր անարիներդ, բոլոր վատերդ։ Հայ աշխարհի փրկութեան մէջ դուք դեր չունիք։ Փախէ՞ք, միայն զգոյշ, մի՛ անցէք այն նուիրական վայրերով, ուր հանգչում են Պետոներն ու Մարտիկները, Աւետիսեաններն ու Վազգէնները, Սերոբ ու Գէորգ Չաուշ, Արաբօ ու Տարօնի Առիւծ Սերոբ իր զոյգ կորիւններով ու բոլոր նրանք՝ անյայտ ու յայտնի, որոնք մի օր ընկան ձեզ համար, ձեր ճակատից ստրկութեան ամօթը, ձեր թիկունքից բռնութեան անարգ բեռը վերցնելու համար» [Նույն տեղում]։ Հայրենիքը ծանր պահին լքողներին Տարագիրը դասալիք էր համարում։ Միևնույն ժամանակ «Արտագաղթի առիթով» հոդվածում Է. Ակունին դիմում էր տարագրված հայերին. «Հայրենիքը ձեզ է սպասում, վերադարձէք։ Դարձը կեանքն է Վաթանի, փախը՝ սկիզբը նրա մահուան» [Աշխատանք, 1913, №21]։ Քաղաքական նման հայացքներ ունեցող խմբագրակազմը, պարզ է, որ 1915 թվականին նույնպես պիտի շարունակեր պնդել, թե հայրենիքը չպիտի լքել, եթե այնտեղից թուրքական իշխանությունները քեզ բռնի չէին տեղահանել կամ կոտորել։

1915 թվականին «Աշխատանքը» կոչ էր անում Զմյուռնիայի գավառի բնակիչներին օգնել Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած իրենց հայրենակիցներին ամեն տեսակետով։ Հոդվածներից մեկում նշվում էր, որ Իզմիրի «Աղքատխնամ» կազմակերպությունը չէր մտածում օգնության ձեռք մեկնել գավառի հեռավոր անկյուններում թաքնվող անտերանտիրական հայերին, որոնցից շատերը մի կերպ գոյատևում էին սարերում ու ձորերում [Աշխատանք, 1915, №96]։ «Զո՞վ մեղադրենք» հարցով էր «Աշխատանքը» դիմում ընթերցողներին՝ ներկայացնելով նրանց անտարբերությունը և խստասրտությունը, քանի որ մի կտոր հաց չէին տալիս սոված որբերին ու այրիներին [Նույն տեղում]։

«Աշխատանքը» մինչև 1915 թվականի՝ մեզ հասած վերջին համարները բարձրացրել էր ազգային դիմագիծը չկորցնելու և բռնազավթված հայրենիքում հայ մնալու խնդիրները։

Ամփոփելով՝ կարելի է փաստել հետևյալը.

- Զմյուռնիայի «Աշխատանք» պարբերականն իր հրատարակության ողջ ընթացքում բարձրաձայնել էր ազգային միասնության անհրաժեշտության մասին՝ այն դիտարկելով իբրև օսմանյան տերության մեջ հայկական դիմագծի ու հայապահպանության հիմնական և անհրաժեշտ միջոց,
- թերթը ողջունել էր 1913 թվականին Զմյուռնիայում գործող հայ ավանդական կուսակցությունների մասնաճյուղերի միասնական գործելու նախաձեռնությունը, թեև շուտով արձանագրել էր գործնականում դրա ձախողման փաստը, ինչը կործանարար էր համարել հայության համար ստեղծված աշխարհաքաղաքական անբարենպաստ ու ցեղասպանության վտանգով լի պայմաններում,
- պարբերականն առավելապես ազգային կրթությունն էր համարել հայեցի դիմագիծը չկորցնելու կռվան, ինչով էլ պայմանավորված էր եղել խմբագրակազմի առանձնակի մոտեցումը այդ թեմայի նկատմամբ,
- «Աշխատանքի» վերլուծական հոդվածներում և խմբագրականներում երբեմն տրվել էին ծայրահեղ գնահատականներ՝ դրանցում բարձրացվող համահայկական և ներհամայնքային խնդիրների վերաբերյալ, թեև պետք է փաստել, որ հիմնականում արդարացված ու փաստարկված էին առավելապես չեզոք դիրքորոշումներ որդեգրած այս պարբերականի մտահոգությունները մասնավորապես ազգային դիմագծի պահպանման առումով։

SUMMARY

The core concerns of “Ashkhatank” newspaper of Smyrna were issues on national identity preservation in Ottoman Turkey. The periodical intertwined them with Armenian upbringing and national education issues, and national education viewed as a necessary pre-requisite to remain

Armenian. The newspaper referred to these issues in the field mostly in the frame of educational and upbringing problems.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խառատյան Ա. Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես), Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, 533 էջ։
2. Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, հ.1, Կահիրե, 2006, 701 էջ։
3. Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, հ. 2, Երևան, ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2017, 786 էջ։
4. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ.8 (Ը), Երևան, Հայաստան, 2001, 972 էջ։
5. «Աշխատանք», Իզմիր 1910, թիվ 11, 1913, թիվ 2, 3, 5, 15, 17, 19, 20, 21, 23, 25, 26, 28, 29, 46, 1914, թիվ 52, 55, 1915, թիվ 96։